ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՄԱԱՊՁԲ-9/8-1

ք.Երևան 20 .12.2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Սադոյանի, ով գործում է «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **2** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **2** օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **35,850,000** (երեսունհինգ միլիոն ութ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, 5 բանկային օրվա ընթացքում՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են

ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում: 6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

---

[1] *Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ՌԲ վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Ար-Մեդիկա» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք.Երևան, Լենինգրադյան 23/11, 92տ.
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144129	Հ/Հ 1570023018670100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01268548
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Է. ՍԱԴՈՅԱՆ

Հավելված N 1
N ՀՄԱԱՊՁԲ-9/8-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի									
Հ/Հ	անվանումը	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	չափման միավորը	ընդհանուր քանակը	միավոր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	Մատակարարման ժամկետը
84	Կոնքազդրային հոդի ոչ ցեմենտային էնդոպրոթեզների հավաք	Կոնքազդրային հոդի ոչ ցեմենտային էնդոպրոթեզների հավաք	Depuy Synthes	Johnson&Johnson /ԱՄՆ, Անգլիա, Գերմանիա Բրիտանիա, Ֆրանսիա Մեքսիկա, Իռլանդիա/	լրակազմ	23	950,000	21,850,000	Ոչ ուշ, քան 23.12.2019թ.
87	Երկկոմպոնենտ պարանոցային կեյջերի և պտուտակների հավաք	Երկկոմպոնենտ պարանոցային կեյջերի և պտուտակների հավաք	Depuy Synthes Spine	Johnson&Johnson /ԱՄՆ, Անգլիա, Գերմանիա Բրիտանիա, Ֆրանսիա Մեքսիկա, Իռլանդիա/	լրակազմ	1	14,000,000	14,000,000	Ոչ ուշ, քան 23.12.2019թ.

Ապրանքները պետք է մատակարարվեն ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական դեղաբազա:

Ապրանքների մատակարարման ժամանակ Վաճառողը Գնորդին ներկայացնում է.

1. Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագրի (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները) պատճենը,

2. Արտադրողի միջազգային հավաստագրի /ISO, GMP, EC կամ այլ/ և/կամ/ արտադրող պետության կողմից տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման հավաստագրի պատճենը,

3. Տվյալ խմբաքանակի համար ապրանքն արտադրողի կամ վերջինիս պաշտոնական ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ(ներ)ը:

Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ ապրանքները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/3-ը:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ապրանքի		
Հ/Հ	անվանումը	տեխնիկական բնութագիրը
84	Կոնքազդրային հոդի ոչ ցեմենտային էնդոպրոթեզների հավաք	Պատրաստված է Ti Al6V4 համաձուլվածքից, ISO 5832-3 ստանդարտին համապատասխան, նախատեսված կոնքազդրային հոդի ազդրային հատվածի ոչ ցեմենտային եղանակով էնդոպրոթեզավորման համար: Աշխատանքային ամբողջ մակերեսը պատված 155±35 միկրոն հաստությամբ հիդրոքսիապատիտի շերտով: Պատրաստված է եռակի սեպի տեսքով, ինքնակենտրոնացող, պրոքսիմալ հատվածը լատերալ մասում ունեն հատվածք, եզրերը կլորացված, ունեն պրոքսիմալ հորիզոնական, կենտրոնական և դիստալ երկայնական ակոսներ: Առաջնային ֆիքսացիան ապահովվում է ճնշմամբ տեղավորման միջոցով, իսկ երկրորդայինը՝ ոսկրերի սերտաճման: Գլխիկի ամրացման համար նախատեսված ինքնակենտրոնացվնող կցաշուրթը 12/14, պարտադիր օղակաձև միկրոակոսներով, վզիկի մակերեսը փայլեցված: Ունի ստանդարտ վզիկով և լատերիլիզացված վզիկով տարբերակներ, օձիքով և առանց օձիքի տարբերակներ, երկու դեպքում էլ վզիկ դիաֆիզարային անկյունը՝ 135 աստիճան, ինչպես նաև Coxa Vara տարբերակ՝ 125 աստիճան վզիկ դիաֆիզարային անկյունով: Ոտիկի երկարությունը ստանդարտ տարբերակում 141 – 190մմ, լատերալիզացվածում՝ 130 – 177մմ: Շարքում ունի՝ հիպոպլաստիկ 6 և ստանդարտ 8; 9; 10; 11; 12; 13; 14; 15; 16; 18; 20 չափեր: Հավաքում ներառված են հետևյալ չափերը՝ Ստանդարտ 8, առանց օձիքի - 1 հատ,Ստանդարտ 9, առանց օձիքի - 1 հատ,Ստանդարտ 10, առանց օձիքի - 2 հատ, Ստանդարտ 11, առանց օձիքի - 2 հատ,Ստանդարտ 12, առանց օձիքի - 2 հատ,Ստանդարտ 13, առանց օձիքի - 2 հատ,Ստանդարտ 14, առանց օձիքի - 2 հատ,Ստանդարտ 15, առանց օձիքի - 2 հատ,Ստանդարտ 16, առանց օձիքի - 1 հատ,Ստանդարտ 9, օձիքով - 1հատ,Ստանդարտ 10 օձիքով - 1 հատ,Ստանդարտ 11 օձիքով - 1 հատ,Ստանդարտ 12 օձիքով - 1 հատ,Ստանդարտ 13 օձիքով - 1 հատ,Ստանդարտ 14 օձիքով - 1 հատ,Ստանդարտ 15 օձիքով - 1 հատ ,Ստանդարտ 16 օձիքի - 1 հատ: Իսկ մնացած հասանելի չափերը ՝ հիպոպլաստիկ 6 և 18, 20, կարող են փոխարինվել առկա չափերից որևէ մեկի հետ՝ Պատվիրատուի պահանջով՝ ըստ անհրաժեշտության: Առաքվում են ստերիլ փաթեթավորված: **<u>Գլխիկ՝ 28 մմ</u>**: Պատրաստված է կոբալտքրոմային (CoCr) համաձուլվածքից: Համապատասխանի ISO 5832-4 ստանդարտին: Մակերեսը փայլեցված: Ոտիկին միացման համար նախատեսված կոնը՝ 12/14 ինքնակենտրոնացվող ГОСТ 7206-1-2005 : Շրջագիծը 28մմ: Ըստ նստեցման խորության ունենի առնվազն 4 չափ: Առկա է՝ + 1.5, +5.0, +8.5, + 12.0, չափերով: Հավաքում ներառված են հետևյալ չափերը՝ + 1.5- 6 հատ, + 5.0- 7 հատ, + 8.5- 6 հատ ,+ 12.0 – 4 հատ: Առաքվում են ստերիլ փաթեթավորված: **<u>Քացախափոսի ոչ ցեմենտային իմպլանտացիայի համար նախատեսված բաժակ ամբողջական կիսոլորտ</u>**: Պատրաստված են բարձր որակի Ti Al6V4 համաձուլվածքից, ISO 5832-3 ստանդարտին համաձայն: Ունենի ամբողջական պոլուսֆերայի ձև առանց շրթի: Առաջնային ֆիքսացիայի եղանակը՝ – press-fit, լրացուցիչ ֆիքսացիայի համար ունի պտուտակներով ամրացման հանարավորություն: Պատրաստված է հատուկ ոչ ցեմենտային ֆիկսացիայի համար նախատեսված ծածկույթով, որը իրենից ներկայացնում է 250 միկրոն հեռավորությամբ տիտանից 0,2 միկրոն չափի գնդիկների՝ ծածկույթի վրա, ոչ ցեմենտային ֆիքսացիան ուժեղացնող տիտանից ցուպիկների շերտ ծածկույթի ծակոտենությունը 80%: Ներդրիր ամրացման համար ունի հատուկ ֆիկսող Կոնաձև մեխանիզմ, ներդիրիպտտոմանը հակազդող 12 փոսիկներ: Հնարավորություն ունի ցանկացած շփման զույգով՝ (մետաղ-պոլիէթիլեն, կերամիկա-մետաղ, կերամիկա պոլիէթիլեն), օգտագործման համար: Ունենեն անցքեր անհրաժեշտության դեպքում պտուտակներով ամրացնելու համար: Գոյություն ունեն երեք սեպերով, առանց անցքերի, երեք անցքով, և երեքից ավելի՝ բազմակի անցքերով տարբերակներ: Հասանելի չափերը՝ 46; 48; 50; 52; 54; 56; 58; 60; 62; 64; 66, 2մմ քայլով: Հավաքում ներառված են հետևյալ չափերը հետևյալ քանակներով Բազմակի անցքերով տարբերակ՝ 46 մմ-1 հատ, 48 մմ-1 հատ, 50 մմ – 2 հատ, 52 մմ–2 հատ, 54 մմ–2 հատ, 56 մմ–2 հատ, 58 մմ–2 հատ, 60 մմ – 1 հատ: Երեք անցքով տարբերակ՝ 48 մմ -1 հատ, 50 մմ –2 հատ, 52 մմ–2 հատ, 54 մմ–2 հատ, 56 մմ–1 հատ, 58 մմ–1 հատ, 60 մմ–1 հատ: Իսկ մնացած հասանելի չափերը՝ 62, 64 և 66, կարող են փոխարինվել առկա չափերից որևէ մեկի հետ՝ Պատվիրատուի պահանջով՝ ըստ անհրաժեշտության: Առաքվում են ստերիլ փաթեթավորված: **<u>Քացախափոսի իմպլանտացիայի ոչ ցեմենտային բաժակի ներդիր</u>**: Պատրաստված է բարձր որակի բարձրամոլեկուլյար կրոն-լինկավորված պոլիէթիլենից, որն օժտված է բիոլոգիական չեզոքությամբ և բարձր կայունությամբ, համապատասխան ISO 5834-2 ստանդարտին: Ներքին տրամագիծը 28մմ: Հոդախախտից պաշտպանող շուրթը 10 աստիճան, լրացուցիչ հաստացված +4 : Հասանելի չափերը՝46; 48; 50; 52; 54; 56; 58; 60; 62;64;66: Հավաքում ներառված են հետևյալ չափերը՝ 10 աստիճան + 4 -46 մմ- 1 հատ, 48 մմ - 2 հատ, 50 մմ – 4 հատ, 52 մմ – 4 հատ, 54 մմ – 4 հատ, 56 մմ –

		3 հատ, 58 մմ – 3 հատ, 60 մմ – 2 հատ :Իսկ մնացած հասանելի չափերը՝ 62, 64 և 66, կարող են փոխարինվել առկա չափերից որևէ մեկի հետ՝ Պատվիրատուի պահանջով՝ ըստ անհրաժեշտության: Առաքվում են ստերիլ փաթեթավորված: **<u>Կոնքազդրային հոդի ոչ ցեմենտային էնդոպրոթեզի ացետաբուլյար կոմպոնենտի՝ բաժակի լրացուցիչ ամրացման պտուտակ</u>**:Պատրաստված են Ti Al6V4 համաձուլվածքից, ISO 5832-3 ստանդարտին համապատասխան: Գլխիկը համապատասխան բաժակների վրա գոյություն ունեցող հատուկ անցքերին, նախատեսված բաժակի լրացուցիչ ամրացման համար: Տրամագիծը 6,5մմ: Հասանելի չափերը՝ 15; 20; 25; 30; 35; 40; 45; 50; 55, 60, 65, 70մմ: Հավաքում ներառված են հետևյալ չափերը՝ 15մմ – 3 հատ, 20 մմ – 4 հատ, 25 մմ – 5 հատ, 30 մմ – 5 հատ, 35 մմ – 5 հատ:Իսկ մնացած հասանելի չափերը՝ 40, 45, 50, 55, 60, 65 և 70, կարող են փոխարինվել առկա չափերից որևէ մեկի հետ՝ Պատվիրատուի պահանջով՝ ըստ անհրաժեշտության: Առաքվում են ստերիլ փաթեթավորված:
87	Երկկոմպոնենտ պարանոցային կեյջերի և պտուտակների հավաք	Պարանոցային երկկոմպոնենտ, պտուտակների շարժական առանցքով կեյջերը նախատեսված են պարանոցային ողերի առաջային սպոնդիլոդեզի համար, կազմված են երկու մասից՝ մարմնից, որը պատրաստված է պոլիեֆիրեֆիրկետոնից եւ տիտանի համաձուլվածքից պատրաստված թիթեղից, այդ երկու մասեր միմյաց միացված են շարժական մեխանիզմով ծանրաբեռնվածության հավասարաչափ բախշման նպատակով: Գոյություն ունենան մարմնի՝ լորդոտիկ, զուգահեռ, եւ կոր ուռուցիկ տարբերակներ նախատեսված տարբեր անատոմիական առանձնահատկությունների դեպքում օգտագործման համար: Առաջային մակերեսը զրոյական է և չի պահանջում ողերի առաջային մակերեսի մշակում: Թիթեղը ունի միգրացիան սահմանափակող ելուններ: Համակարգը հնարավորություն է տալիս ընտրելու 5-ից մինչև 12մմ բարձրությամբ իմպլանտներ: Ամրացվում է երկուսից ոչ ավել պտուտակներով՝ ողերի մարմինները հնարավորինս քիչ վնասելու նպատակով: Պտուտակները հնարավոր է ձգել տարբեր անկյան տակ, ունեն պտուտակների հետպտույտն արգելափակող մեխանիզմ: Հնարավոր է օգրագործել տարբեր մակարդակների վրա անմիջապես հաջորդ ողից: Լայնությունը 17,5 մմ, խորությունը՝ 13,55 մմ: Պտուտակները պետք է նախատեսված լինեն թիթեղի տատանվող անկյան եւ արգելափակման մեխանիզմի հետ աշխատելու համար: Տրամագիծը համապատասխան թիթեղում նրանց համար նախատեսված տրամագծին համապատասխան, ծայրը՝ ծակող և ինքնակենտրոնացող: 1. Պարանոցային եկկոմպոնենտ պտուտակների տատանվող անկյամբ լորդոտիկ կեյջ 5,0մմ բարձրությամբ – 3 հատ 2. Պարանոցային եկկոմպոնենտ պտուտակների տատանվող անկյամբ լորդոտիկ կեյջ 6,0մմ բարձրությամբ – 3 հատ 3. Պարանոցային եկկոմպոնենտ պտուտակների տատանվող անկյամբ լորդոտիկ կեյջ 7,0 մմ բարձրությամբ – 4 հատ 4. Պարանոցային եկկոմպոնենտ պտուտակների տատանվող անկյամբ լորդոտիկ կեյջ 8,0 մմ բարձրությամբ – 4 հատ 5. Պարանոցային եկկոմպոնենտ պտուտակների տատանվող անկյամբ մի կողմից ուռուցիկ կեյջ 6,0մմ բարձրությամբ – 2 հատ 6. Փոփոխվող անկյամբ պտուտակ ծակող ծայրով 14 մմ երկարությամբ- 15 հատ 7. Փոփոխվող անկյամբ պտուտակ ծակող ծայրով 16մմ երկարությամբ- 50 հատ

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ե. ՉԱՐԲԽՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Ար-Մեդիկա» ՍՊԸ
տնօրեն

Ա. ՍԱԴՈՅԱՆ

Հավելված N 2
N ՀՄԱԱՊՁԲ-9/8-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի					
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	CPV անվանումը	Անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝	
				դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 25-ը	Ընդամենը
84	33141223/27	բժշկական այլ գործիքներ և պարագաներ բազմակոմպոնենտ	Կոնքազդրային հոդի ոչ ցեմենտային էնդոպրոթեզների հավաք	21,850,000	21,850,000
87	33141223/34	բժշկական այլ գործիքներ և պարագաներ բազմակոմպոնենտ	Երկկոմպոնենտ պարանոցային կեյջերի և պտուտակների հավաք	14,000,000	14,000,000

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ԴԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Ար-Մեդիկա» ՍՊԸ
տնօրեն

Ա. ՍԱՂՈՅԱՆ

Հավելված N 3
N ՀՄԱԱՊՁԲ-9/8-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ՀՄԱԱՊՁԲ-9/8-1 պայմանագրի

ԱԿՏ N _____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն